ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱ
Journal of Sociology: Bulletin of Yerevan University

2021, № 2, 3-18 *Սոցիոլոգիական հետազոտություն*
https://doi.org/10.46991/BYSU:F/2021.12.2.003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԷՄՊԻՐԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հոդվածում համահանրապետական ներկայացուցչական զանգվածային հետազոտության տվյալների հիման վրա էթնիկ ինքնության վեց առավել տարածված չափանիշների կիրառմամբ փորձ է արվել բացահայտելու Հայաստանի հայ հասարակության շրջանում «ո՞վ է հայը» հարցի պատասխանը: Գնահատվել են կիրառված չափանիշների տարածվածությունը, դրանց հիման վրա սահմանվել են «էթնիկ ինքնության միջուկ» և «էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածություն» հասկացությունները: Բացահայտվել է էթնիկ ինքնության դիտարկված չափանիշների փոփոխության ուղղություններն ու արագությունները, կանխատեսվել է դրանց տարածվածության չափը 1998-2012 թթ. ծնվածների շրջանում: Ուսումնասիրվել են դիտարկված չափանիշների շաղկապվածությունները հայաստանյան հասարակության շրջանում:

Բանալի բառեր – *էթնիկ ինքնություն, էթնիկ ինքնության չափանիշներ, էթնիկ ինքնության չափանիշների կենտրոնացվածություն, էթնիկ ինքնության դինամիկա*

Իրավիճակը և խնդիրը

Մեր ժամանակաշրջանին բնորոշ է անցումը հետարդիականությանը: Մշակութային ոլորտում այն արտահայտվում է մարդու ինքնության, այդ թվում՝ սեռային, ընտանեկան, էթնիկ, ազգային և քաղաքակրթական ինքնությունների խարխլմամբ, կազմալուծմամբ, տարրալուծմամբ և ինքնության կամայական էկլեկտիկ կազմավորումներով փոխարինմամբ: Հետարդիականությանն անցումը բնութագրվում է բազմաթիվ նոր և իրարամերժ արժեհամակարգերի և վարքագծային մոդելների առատությամբ, տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ և դրանցում իրարամերժ և հակասական բովանդակությունների առկայությամբ: Արագ փոփոխությունները մարդկանց շրջանում առաջացնում են արդի աշխարհի անկայունության և ապագայի նկատմամբ վախի զգացողություն: Իրարամերժ և նախկինում անընդունելի վարքագծային մոդելների և արժեհամակարգերի ներթափանցումն առօրյա կյանք առաջացնում է հասարակական բարքերի անկման, այլասերման և քաղաքակրթական ճգնաժամի զգացողություն: Արժեհամակար-

գային անլուծելի կոնֆլիկտները մարդկանց ընկալումներում իմաստազրկում են իրենց կյանքը[1]: Այդ գործընթացների տարածմանը մեծապես նպաստում է այն, որ «տնտեսապես զարգացած հասարակությունները չեն ձևավորել այնպիսի գաղափարախոսություններ, որոնք ունակ են բավարարելու մարդկանց գոյության իմաստավորվածության և միմյանց միջև ընդհանրության զգացողության պահանջմունքները»[2]:

Սակայն կյանքի ընթացքի հիմնական միտումները միշտ առաջացնում են հակադիր միտումներ: Մարդիկ գիտակցաբար կամ ենթագիտակցաբար ձգտում են պահպանել իրենց ինքնությունը, որի կարևորագույն և ամենախորքային շերտը էթնիկ ինքնությունն է: Սոցիալ-հոգեբանական տեսակետից էթնիկ ինքնության կարևորագույն հատկանիշը միջսերնդային կայունությունն է, որն էթնիկ ինքնության այլ տարրերի հետ՝ ընդհանուր ծագում, հայրենիք, լեզու, մշակույթ, սովորություններ, հավատալիքներ, ծեսեր, պաշտպանում է, պահպանում և վերականգնում այն, ինչից նրանց զրկում է հետարդիականությունը:

Հոդվածում դիտարկվել է այն հարցը, թե **ում են Հայաստանի հայերը համարում հայ**: Հարցը կարևոր է մի կողմից՝ հայերի էթնիկ ինքնության պահպանման, իսկ մյուս կողմից՝ սփյուռքահայերի հայրենադարձության դեպքում նրանց Հայաստանի հասարակությունում ինտեգրելու տեսական և գործնական տեսակետներից: Հետազոտության հիմնական հարցից բխում են մի շարք այլ հարցեր, մասնավորապես.

1. Ի՞նչ կարևորություն ունեն անձին հայ համարելու համար տարբեր չափանիշները,
2. Ի՞նչ աստիճանի է անձին հայ համարելու համար տարբեր չափանիշների միմյանց հետ շաղկապվածությունը,
3. Ինչպիսի՞ն է անձին հայ համարելու համար տարբեր չափանիշների շաղկապվածության կառուցվածքը,
4. Շաղկապվա՞ծ են արդյոք անձին հայ համարելու չափանիշներն անձի քաղաքակրթական ինքնության նույնականացման տարրերի հետ:

Մեթոդաբանություն

Հոդվածում ներկայացված արդյունքները ստացվել են «Կյանքի որակը Հայաստանում -2015»[3] համահանրապետական սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների շտեմարանի երկրորդային վերլուծությամբ:

---

[1] Տե՛ս **Тоффлер Э. (2002).** Шок будущего. М.: Издательство АСТ.

[2] **Росс, Л., & Нисбетт, Р. (1999**). Человек и ситуация. Перспективы социальной психологии. (Е. Н. Емельянов, В. С. Магун, Eds., & В. В. Румынский, Trans.) М.: Аспект Пресс. https://evolkov.net/soc.psychol/Ross.L.Nisbett.R/

[3] Հետազոտության ընդհանուր համակցությունն էր Հայաստանի 18 և ավելի բարձր տարիքի բնակչությունը: Ընտրանքը՝ հավանականային, բազմաստիճան ստրատիֆիկացված, կլաստերային, ներկայացուցչական է ըստ մարզերի, բնակավայրի տիպի, սեռի և տարիքի: Ընտրանքի ծավալը՝ 2011 հարցվող: Ընտրանքային սխալը՝ ± 2.18%:

Ըստ ակադեմիկոս Վ. Ա. Տիշկովի՝ «էթնոսի համընդհանուր սահմանում գոյություն չունի …»[4]: Ըստ Ս. Ե. Ռիբակովի՝ «սոցիալական գիտություններում և սոցիալական փիլիսոփայությունում էթնիկության և էթնոսի բնույթն ու էությունը մնում են ամենաբարդ և ամենախճճված հարցերի շարքում»[5]: Հոդվածում հայերի էթնիկ ինքնության էմպիրիկ ուսումնասիրության համար էթնոսի սահմանման չափանիշների ընդարձակ համախմբությունից[6] ընտրվել են վեցը, որոնք առկա են էթնոսոցիոլոգիական համարյա բոլոր տեսություններում և, բացի դրանից, ըստ դիտարկումների, հաճախ են կիրառվում հայերի կողմից որևէ անձի որպես հայ կամ «լիարժեք հայ» նույնականացնելիս[7]: Դրանցից առաջինը անձի **ինքնանույնականացումն է որպես հայ**: Երկրորդը և երրորդը **արյունակցական կապի առկայությունն** է **հայերի՝ որպես էթնիկ համախմբության հետ** (հոր և մոր հայ լինելը): Այդ կապը սերունդներով դեպի անցյալը տեղաշարժվելիս սահմանային դեպքում անուղղակիորեն արտապատկերում է հայ էթնոսի **միասնական ծագումը**: Չորրորդը **միասնական լեզուն է,** հինգերորդը՝ **միասնական կրոնը** և վեցերորդը՝ **միասնական տարածքը**՝ հայրենիքը:

Էթնիկ նույնականացման նշված չափանիշները օպերացիոնալացվել են հետևյալ հարցախմբով. «Հետևյալ հատկանիշներից որո՞նք են **պարտադիր** հայ համարվելու համար[8].

1. Ինքն իրեն հայ համարելը (հետագա շարադրանքում՝ «ինքնանույնականացում»),
2. Հոր հայ լինելը («հայրը»),
3. Մոր հայ լինելը («մայրը»),
4. Հայերեն խոսել իմանալը («լեզու»),
5. Հայ առաքելական եկեղեցուն պատկանելը («կրոնը»),
6. Հայաստանն իր միակ հայրենիքը համարելը («հայրենիքը»)»:

---

[4] **Тишков В. А. (2010).** Этничность. Новая философская энциклопедия: В 4 томах. М., https://iphlib.ru/library/collection/newphilenc/document/HASH01d3f7fefb8f3c025082c7d3

[5] **Рыбаков С. Е. (2012, март-апрель).** К вопросу об этническом феномене. Мониторинг общественного мнения, № 2, (108). https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-ob-etnicheskom-fenomene

[6] Այդ բազմաթիվ և բազմաբնույթ չափանիշների ընդարձակ ցանկը տե՛ս **Мухлынкина Ю. В. (2011)**. Этническая идентичность: сущность, содержание и основные тенденции развития. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата философских наук. Специальность 09.00.11. – социальная *философия.* М.. https://ens.mil.ru/science/publications/more.htm?id=10372714@cmsArticle

[7] Դիտարկված չափանիշների սահմանափակ քանակը մեծապես պայմանավորված է նրանով, որ հետազոտությունը, որի շրջանակում դրանք դիտարկվել են, վերաբերում էր այլ թեմայի: Հետազոտությունն իրականացնող կազմակերպությունը՝ IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտը (ներկայումս Brevis), բարեհաճորեն թույլ տվեց այդ հետազոտության հարցաթերթում տեղակայել էթնիկ ինքնության ուսումնասիրության համար որոշակի սահմանափակ տարածք:

[8] Հետազոտության ընտրանքում այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչների քանակը մոտ 1% էր, որոնց նշված հարցը չի տրվել:

Կիրառված վեց չափանիշների համախմբությունը հետազոտությունում անվանվել է **հայերի էթնիկ ինքնության միջուկ**[9]: Պարզ է, որ հետազոտությունում էթնիկ ինքնության միջուկում չափանիշների կիրառված ցանկը լրիվ չէ: Պակասում են ընդհանուր մշակույթը, այդ թվում՝ ընդհանուր սովորույթները, ծեսերը, կենսակերպը, ինչպես նաև ընդհանուր ծագման վերաբերյալ համոզմունքն ու առասպելը և այլն: Սակայն դրանց բացակայությունը փոքր-ինչ համալրում են լեզվի, կրոնի և միասնական հայրենիքի չափանիշները, քանի որ դրանք անբացահայտորեն և խտացված արտապատկերում են հայերի միասնական մշակույթի բովանդակության կարևորագույն հատվածը: Մյուս կողմից՝ հայ էթնոսի կազմում առկա են մի շարք ենթաէթնոսներ և բազմաթիվ ենթաէթնիկ մշակույթներ, ուստի «հայերի միասնական մշակույթ» հասկացությունն ունի շատ բարդ կառուցվածք: Քանակական մեթոդներով դրա ուսումնասիրության, մասնավորապես՝ բավարար չափով համարժեք և լրիվ օպերացիոնալացման համար անհրաժեշտ է միջառարկայական գիտական խմբի երկարատև աշխատանք:

Հոդվածում սահմանվել և կիրառվել են նաև «**Էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության ինդեքս**», «**Էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածություն**» աշխատանքային հասկացությունները, որոնք և որոնց անալոգները գտնել գիտական հրապարակումներում հեղինակին չհաջողվեց: Դրանց սահմանումները և հաշվարկների մեթոդաբանությունները տրված են հոդվածի համապատասխան հատվածներում:

Արդյունքներ

Էթնիկ ինքնության միջուկը և դրա չափանիշները

2015 թ.-ին Հայաստանի հայ հասարակության 18 և ավելի տարիքի անձանց շրջանում էթնիկ ինքնության դիտարկված վեց չափանիշները պարտադիր համարող հարցվածների թիվը տրված է գծապատկեր 1-ում: Արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի հայ հասարակությունում անձին հայ համարելու համար բոլոր դիտարկված չափանիշների առանձին-առանձին պարտադիր լինելը շատ տարածված է: Ամենից տարածված չափանիշն է **անձի՝ որպես հայ ինքնանույնականացումը** («ինքն իրեն հայ համարելը»), որը որպես պարտադիր նշել է հարցվածների 83%-ը: Դրան հետևում են «հոր հայ լինելը», «հայերեն խոսել իմանալը», «Հայ առաքելական եկեղեցուն պատկանելը» և «Հայաստանն իր միակ հայրենիքը համարելը», որոնցից յուրաքանչյուրը նշել է հարցվածների մոտ երեք քառորդը՝ 76-77%-ը: Շատ բարձր է նաև «մոր հայ լինելը» բնութագիրը պարտադիր համարողների թիվը՝ հարցվողների երկու երրորդը՝ 67%-ը:

[9] Ստացված արդյունքները ցույց են տվել, որ անվանումը համարժեք է, քանի որ անձին հայ համարելու համար բոլոր նշված չափանիշների պարտադիր լինելը շատ տարածված է:

Գծապատկեր 1

Հայ համարվելու համար պարտադիր չափանիշների տարածվածությունը



Ստացված արդյունքը թույլ է տալիս պնդել, որ **դիտարկված վեց չափանիշների համախմբությունը լավ է մոտարկում հայերի էթնիկ ինքնության միջուկը:** Այդուհանդերձ, ասվածից չի հետևում, որ հայերի էթնիկ ինքնության միջուկը կազմված է **բացառապես** նշված չափանիշներից:

Էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության ինդեքսը

Հարցվածները անձին հայ համարելու համար նշել են տարբեր քանակով և զուգորդություններով պարտադիր չափանիշներ: Պարտադիր չափանիշների նույն քանակն ունեցող համախմբությունները կարող են կազմավորվել տարբեր զուգորդություններով: Այս համատեքստում հարց է առաջանում՝ *որքանո՞վ է տվյալ անձի մեջ կամ հասարակական խմբում կամ ամբողջ հասարակությունում «կենտրոնացված» («ամուր», «կոնսոլիդացված»)* **էթնիկ ինքնության միջուկը**:

Էթնիկ ինքնության միջուկի ամրությունը բնութագրելու համար կառուցվել է **էթնիկ ինքնության կենտրոնացվածության ինդեքսը**, որը տվյալ հարցվողի կողմից անձին հայ համարելու համար որպես պարտադիր նշված չափանիշների քանակն է: Ինդեքսի կառուցման տրամաբանությունը և բովանդակությունը հետևյալն են՝ որքան տվյալ անձն ավելի մեծ քանակով չափանիշներ է պարտադիր համարում մարդուն հայ ճանաչելու համար, այնքան մնացած հավասար պայմաններում նրա մեջ ավելի «կենտրոնացված է» («ամուր է», «համախմբված է») էթնիկ ինքնության միջուկը: Կառուցված ինդեքսի բաշխումը և կուտակային բաշխումը տրված են գծապատկեր 2-ում: Ինդեքսի արժեքները փոփոխվում են [0-6] միջակայքում:

Գծապատկեր 2

Էթնիկ ինքնության ինդեքսի բաշխումը, Հայաստան, 2015



Ինդեքսի 6 արժեքը նշանակում է, որ հարցվողը անձին հայ համարելու համար պարտադիր է համարել բոլոր վեց դիտարկված չափանիշները, այսինքն՝ հարցվողի էթնիկ ինքնության կենտրոնացվածությունն առավելագույնն է: Ինդեքսի 0 արժեքը նշանակում է, որ հարցվողը էթնիկ ինքնության դիտարկված վեց չափանիշներից ոչ մեկը անձին հայ համարելու համար պարտադիր չի համարել, այսինքն՝ այդ արժեքի դեպքում հարցվողի էթնիկ ինքնության կենտրոնացվածությունը նվազագույնն է: Ինդեքսի որակի փորձարկումը ցույց տվեց, որ այն շատ բարձր է[10]:

Էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության ինդեքսը հարմար է տարբեր հասարակություններում և հասարակական խմբերում էթնիկ ինքնության միջուկի համեմատությունների և դինամիկայի ուսումնասիրության դեպքում, քանի որ թույլ է տալիս վեց փոփոխականի փոխարեն դիտարկել միայն մեկը:

Ինդեքսի բաշխումը և կուտակային բաշխումը թույլ են տալիս ենթադրել, որ Հայաստանի հայ հասարակությունում էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածությունը բարձր է: Այսպես, հարցված հայերի մոտավորապես կեսը (48%-ը) անձին հայ համարելու համար պարտա-

[10] Ինդեքսի որակի ցուցանիշը՝ Կրոնբախի α = 0.794: Այդ ցուցանիշի արժեքը 0.70-0.80 միջակայքում գնահատվում է որպես «լավ» մակարդակ, իսկ 0.80-0.90 միջակայքում՝ «գերազանց» մակարդակ: Տե՛ս **DeVellis, R. F. (1991).** Scale Development: Theory and Applications. Applied Social Research Methods Series, Vol. 26: Ինդեքսի որակի մասին է վկայում նաև այն, որ 2015 թ. էթնիկ ինքնության բաղադրիչների սեփական վեկտորների 1-ից մեծ լինելու պայմանի կիրառմամբ գործոնային վերլուծությունը տվել է միագործոն մոդել: Այդ գործոնը բացատրում էր բոլոր վեց փոփոխականների ընդհանուր դիսպերսիայի 50%-ը:

դիր է համարել բոլոր վեց չափանիշների առկայությունը: Այս խումբն ունի էթնիկ ինքնության հնարավոր առավելագույն կենտրոնացվածություն: Հայերի մոտավորապես երկու երրորդը (62%) պարտադիր է համարում հինգ և ավելի բնութագրերի առկայությունը, իսկ մոտավորապես երեք քառորդը (72%)՝ չորս և ավելի բնութագրերի առկայությունը:

Էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության չափը

Այդուհանդերձ, ինդեքսն ունի յոթ արժեք, ինչը տարբեր խմբերի համեմատությունների դեպքում կարող է առաջացնել ընկալման դժվարություններ և բազմակի մեկնաբանություններ: Ցանկալի է ինդեքսի միջոցով ստանալ էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության մեկ թվով արտահայտված **չափ**:

Ուստի կիրառվել է հետևյալ մոտեցումը: Որպես էթնիկ ինքնության կենտրոնացվածության չափ կիրառվել են տնտեսական ոլորտի կենտրոնացվածության գնահատման համար լայնորեն կիրառվող **կենտրոնացվածության հարաբերությունները՝ CR_N** (concentration ratio)**:** Դրանք սահմանվում են որպես տվյալ տնտեսական ոլորտի N ամենախոշոր ֆիրմաների զումարային (կուտակային) մասնաբաժին: Առավել հաճախ կիրառվում է CR_4-ը, այսինքն՝ ոլորտի չորս ամենախոշոր ֆիրմաների մասնաբաժինը: Որքան ավելի մեծ է այդ մասնաբաժինը, այնքան ավելի մեծ է ոլորտի կենտրոնացվածությունը[11]: Երբեմն օգտագործվում է նաև CR_1-ը, որը ցույց է տալիս, թե շուկայի որ մասն է գրավում ամենախոշոր ֆիրման:

Մեր դեպքում այս մոտեցման կիրառելիության մեթոդաբանական հիմքն այն է, որ էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածությունը չափելիս որպես «ֆիրմայի» անալոգ հանդես է գալիս էթնիկ ինքնության ինդեքսի տվյալ արժեքն ունեցող հասարակական խումբը: Ամենամեծ ֆիրմայի անալոգն է ինդեքսի 6 [առավելագույն] արժեք ունեցող խումբը, որը տիրապետում է ամբողջ «շուկայի» (հասարակության) 48%-ին (CR_1 = 0.48): Երկրորդ ամենամեծ ֆիրմայի անալոգն է ինդեքսի 5 արժեք ունեցող խումբը, որը տիրապետում է ամբողջ «շուկայի» 14%-ին (հետևաբար, CR_2 = 0.48 + 0.14 = 0.62): Այս անալոգիաների կիրառման դեպքում էթնիկ ինքնության միջուկի կուտակային բաշխումները, սկսած ինդեքսի ամենամեծ արժեքից, դրա կենտրոնացվածության CR_N հարաբերություններն են, որտեղ N = 6, 5, 4, 3, 2, 1, 0:

Այսպիսով, 2015 թ.ն Հայաստանի հայերի շրջանում էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածությունը կազմել է CR_4 = 0.82 (տե՛ս

[11] Կենտրոնացվածության CR_4 հարաբերության արժեքները որպես կանոն մեկնաբանվում են հետևյալ կերպ. 0% - կենտրոնացվածության բացակայություն, (0%; 40%] – ցածր կենտրոնացվածություն, (40%-70%] – միջին կենտրոնացվածություն, (70% -100%) – բարձր կենտրոնացվածություն և 100% - լիակատար կենտրոնացվածություն (մոնոպոլիա):

գծապատկեր 2), որը պետք է մեկնաբանել որպես կենտրոնացվածության բարձր մակարդակ: Այնուամենայնիվ, սոցիոլոգիական մեթոդիկայի տեսակետից էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության չափերի մեկնաբանությունը ցանկալի է դուրս բերել կառուցված ինդեքսը կիրառելով այլ էթնոսների վերաբերյալ հետազոտություններում, որից հետո վիճակագրական բազմաչափ մեթոդների և մոդելների կիրառմամբ ուսումնասիրել ինդեքսի շաղկապվածությունները էթնոսների ինքնության ամրությունն արտապատկերող այլ բնութագրերի հետ: Սակայն մենք չունենք այդպիսի հետազոտությունների իրականացման հնարավորություն տվյալների բացակայության հետևանքով:

Վերադառնալով գծապատկեր 2-ի տվյալներին՝ հարկ է նշել, որ հայ հասարակության միայն մեկ տոկոսը մարդուն հայ համարելու համար **պարտադիր** չի համարել դիտարկված վեց բնութագրերից և ոչ մեկի առկայությունը: Այդ խումբն առաջացել է գնահատման սանդղակի (պարտադիր է/պարտադիր չէ) առանձնահատկության հետևանքով: Մեծ հավանականությամբ, խումբը կազմված է այն անձանցից, ովքեր դիտարկված բնութագրերը համարել են ոչ թե «պարտադիր», այլ «այս կամ այն չափով կարևոր»:

«Արյան» և «մշակույթի» գործոնների տարածվածությունը

Բացի հայերի էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության պատկերից և չափից, առանձնակի հետաքրքրություն ունեն այն հարցերի պատասխանները, թե

1. Հայաստանի հայերի ո՞ր մասն է անձին որպես հայ նույնականացնելու համար պարտադիր համարում նրա և՛ հոր, և՛ մոր հայ լինելը: Այլ կերպ՝ «**մաքուր արյան»** գործոնի տարածվածությունը,

2. Ո՞ր մասն է անձին որպես հայ նույնականացնելու համար պարտադիր համարում, որ նա պետք է իմանա հայերեն և միաժամանակ պատկանի Հայ առաքելական եկեղեցուն: Այլ կերպ՝ «**ազգը՝ որպես մշակույթ**» գործոնի տարածվածությունը:

Տվյալների վերլուծությունը պարզեց, որ «մաքուր արյան» և «մշակույթի» գործոնները պարտադիր են մոտավորապես նույն ծավալով (64-66%) խմբերում (գծապատկեր 3, Ա և Բ):

Եթե էլ ավելի ընդհանրացնենք արդյունքները, ապա ստացվում է, որ Հայաստանի հայերի կեսից ավելին (54%) մարդուն հայ համարելու համար պահանջում է և՛ «մաքուր արյան», և՛ «ազգը՝ որպես մշակույթ» գործոնների միաժամանակ պարտադիր լինելը (աղյուսակ 1): Իսկ այդ երկու գործոններն էլ միաժամանակ պարտադիր չհամարող սեգմենտը 10% է:

Գծապատկեր 3

«Մաքուր արյան» և «մշակույթի» գործոնները էթնիկ ինքնության կազմում



Աղյուսակ 1

«Արյան» և «մշակույթի» գործոնները պարտադիր համարող սեգմենտների ծավալները

	Պարտադիր է և՛ լեզուն, և՛ կրոնը	Պարտադիր է կա՛մ լեզուն, կա՛մ կրոնը	Պարտադիր չեն ո՛չ լեզուն, ո՛չ կրոնը	Ընդ.
Պարտադիր է և՛ հոր, և՛ մոր հայ լինելը	**53.9%**	7.8%	2.5%	64.2%
Պարտադիր է որևէ ծնողի հայ լինելը	7.4%	4.8%	1.5%	13.7%
Պարտադիր չէ ո՛չ հոր և ո՛չ մոր հայ լինելը	4.9%	7.2%	**10.0%**	22.1%
Ընդ.	66.2%	19.8%	14.0%	100.0%

Էթնիկ ինքնության միջուկի չափանիշների փոփոխությունը ժամանակի ընթացքում

Էթնիկ ինքնության չափանիշների փոփոխությունը տարիքային խմբերում տրված են գծապատկեր 4-ում: Տարիքային խմբերը տրված են նվազման հաջորդականությամբ, ինչը թույլ է տալիս դիտարկել, թե ինչպես է ժամանակի ընթացքում փոխվել էթնիկ ինքնության բոլոր վեց չափանիշներից յուրաքանչյուրի պարտադիր լինելու պահանջը[12]:

[12] Տարիքային խմբերը ժամանակային միջակայքերով փոխարինվել են հետևյալ կերպ. 2015 թ.-ին 60 և ավելի տարիքի անձինք նրանք էին, ովքեր ծնվել են 1956 թ.-ից առաջ, 45-59 տարեկանները ծնվել են 1956-1970 թթ. միջակայքում, 30-44 տարեկանները՝ 1971-1985 թթ., 18-29 տարեկանները՝ 1986-1997 թթ.: Տվյալների հիման վրա կան-

Գծապատկեր 4

Էթնիկ ինքնության չափանիշների պարտադիր լինելու տարածվածությունը տարիքային խմբերում (փոփոխությունը ժամանակի ընթացքում), 2015



Յուրաքանչյուր չափանիշի համար կատարվել է դրա փոփոխության կանխատեսում, թե ինչպիսին կլինի դրա պարտադիր լինելու պահանջը հաջորդող ավելի երիտասարդ խմբում, որը գծապատկերում տրված է որպես 3-14 տարեկանների խումբ և ներկայացված է քառակուսի վանդակներով: Կանխատեսումների որակը շատ բարձր է, «լեզու» չափանիշի համար կանխատեսման մոդելով բացատրվող դիսպերսիան՝ R^2=0.99, «հայրենիքը» չափանիշի համար՝ R^2=0.99, «մայրը» չափանիշի համար՝ R^2=0.98, «Կրոնը» չափանիշի համար՝ R^2=0.97 և «հայրը» չափանիշի համար՝ R^2=0.92:

Տվյալները ցույց են տալիս, որ էթնիկ ինքնության միջուկի բոլոր չափանիշների պարտադիր լինելու պահանջը ժամանակի ընթացքում (տարիքային խմբերում) նվազում է, բացի «ինքն իրեն հայ համարելու» չափանիշից, որը շատ կայուն է և 2015 թ.-ին ուներ ամենաբարձր մակարդակը՝ 83%: Այսինքն՝ անձին հայ համարելու տեսակետից Հայաստանի հասարակությունը դառնում է ավելի հանդուրժողական: Դրան զուգահեռ՝ նվազում է նաև էթնիկ միջուկի կենտրոնացվածության CR_4 ինդեքսի արժեքը (գծապատկեր 5):

խատեսվել են չափանիշների արժեքները հաջորդ՝ 3-17 տարեկանների սերնդի համար, ովքեր ծնվել են 1998-2012 թթ.:

Գծապատկեր 5

Էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության CR_4 ինդեքսը տարիքային խմբերում (փոփոխությունը ժամանակի ընթացքում)



Էթնիկ ինքնության գործոնային կառուցվածքը

Քանի որ էթնիկ ինքնության ինդեքսը կառուցելիս ցույց է տրվել, որ դիտարկված վեց չափանիշները շաղկապված են, հարց է առաջանում՝ ինչպիսի՞ն է այդ շաղկապվածությունների կառուցվածքը: Այն բացահայտելու համար կիրառվել է գործոնային վերլուծություն, որը ցույց է տվել, որ էթնիկ ինքնության միջուկի դիտարկված վեց չափանիշները բավականաչափ լավ արտապատկերվում են մեկ գործոնով: Ստացված արդյունքը վկայում է, որ թեև դիտարկված բոլոր վեց չափանիշներից յուրաքանչյուրի բացահայտ բովանդակությունը էապես տարբերվում է մնացած հինգի բովանդակությունից (բացի «հոր» և «մոր» հայ լինելու պահանջից, որոնք ակնհայտորեն մոտ են միմյանց՝ արտապատկերում են «արյան» գործոնը), այնուամենայնիվ դրանց խորքային բովանդակություններն ունեն նշանակալի ընդհանրություն, այն է՝ դրանք բոլորն էլ էթնիկ ինքնության միջուկի կարևոր և անփոխարինելի բաղադրիչներ են: Ստացված արդյունքը վկայում է, որ հետազոտության մեթոդաբանությունը էթնիկ ինքնության միջուկի բաղադրիչների սահմանման տեսակետից համարժեք է:

Միագործոն լուծման մանրամասն քննությունը հուշեց, որ նպատակահարմար է ավելի խորը դիտարկել չափանիշների միջև շաղկապվածությունները[13]: Կառուցվեց երկգործոն մոդել, որը թույլ տվեց Հայաստանի հայ հասարակության աշխարհայացքում էթնիկ ինքնության կառուցվածքի վերաբերյալ ավելի բովանդակալից պատկերացում կազմել: Այդ մոդելը տրված է գծապատկեր 6-ում[14]:

---

[13] Չափանիշների միագործոն լուծման **ընդհանրությունների** (communalities) դիտարկումը ցույց տվեց, որ էթնիկ ինքնության միջուկի «**ինքնանույնականացում»** («ինքն իրեն հայ համարելը») բաղադրիչն ունի բավականին բարձր **եզակիություն** (specifity): Դա նշանակում էր, որ արժե դիտարկել էթնիկ ինքնության միջուկի ավելի նուրբ վերլուծություն:

[14] Երկու գործոնները բացատրում են վեց փոփոխականների ընդհանուր դիսպերսիայի 64%-ը:

Գծապատկեր 6

Հայաստանի հայերի էթնիկ ինքնության միջուկի կառուցվածքի երկգործոն մոդելը, 2015



Պատկերից երևում է, որ եթե էթնիկ ինքնության միջուկի հինգ բաղադրիչները շատ սերտորեն են շաղկապված միմյանց (խմբավորվել են «էթնիկ ինքնության միջուկի» գործոնում), ապա «ինքն իրեն հայ համարելը» բաղադրիչը վերածվել է առանձին՝ «ինքնանույնականացման» գործոնի: Ստացված պատկերը հուշում է, որ հայ հասարակության գիտակցությունում մարդուն հայ համարելու համար «ինքն իրեն հայ համարելը» չափանիշը ոչ միայն ամենատարածվածն է և սերտորեն շաղկապված է էթնիկ ինքնության մնացած չափանիշներին, այլև ունի շատ բարձր եզակիություն (ինքնուրույնություն):

Քաղաքակրթական և էթնիկ ինքնության շաղկապվածությունները

Ավելի վաղ հրապարակված հետազոտությունում[15] ուսումնասիրվել է Հայաստանի հայերի քաղաքակրթական ինքնության կառուցվածքը հինգ քաղաքակրթությունների համատեքստում՝ հայկական, խորհրդային, ռուսական, եվրոպական և արևելյան: Քանի որ նշված և ներկայացվող հետազոտություններն իրականացվել են նույն տվյալների շտեմարանների կիրառմամբ, հնարավոր է դարձել դիտարկել հետևյալ հարցը՝ **արդյո՞ք ինքնության քաղաքակրթական և էթնիկ շերտերը փոխկապակցված են, և եթե այո, ապա՝ ինչպե՞ս**: Այդ հարցի պատասխանը ստանալու համար իրականացվել է մի կողմից՝ հայերի էթնիկ ինքնության միջուկի չափանիշների, իսկ մյուս կողմից՝ եվրոպական և հայկական **անհատական քաղաքակրթական ինքնությունն**[16] արտապատկերող փոփոխականների միասնական

[15] Տե՛ս **Манукян С. А. (2019).** Цивилизационная идентичность и ее динамика в Армянском обществе. "Вестник Российско-Армянского Университета. Гуманитарные и общественные науки", 3/2019, էջ 22-43:

[16] Վերոնշյալ հոդվածում՝ **Манукян С. А. (2019),** կառուցվել է Հայաստանի հայերի քաղաքակրթական ինքնության երկու պրոֆիլ՝ «Քաղաքակրթական կոլեկտիվ ինքնություն» և «Քաղաքակրթական անհատական ինքնություն»: Առաջինը կառուցվել է հետևյալ հար-

գործոնային վերլուծություն: Վերլուծությունը կատարվել է միայն եվրոպական և հայկական քաղաքակրթական առանցքների համար, քանի որ Հայաստանի հայ հասարակության սոցիոմշակութային դինամիկայի և արժեքային կոնֆլիկտների տեսակետից կարևոր են հատկապես այդ երկու առանցքների վրա ինքնության և լարվածության մակարդակները[17]: Ստացված արդյունքները տրված են համապատասխանաբար գծապատկեր 7-ի Ա-ում և Բ-ում: Երկու գծապատկերների ընդհանուր պատկերը նույնն է: Դրանք ցույց են տալիս, որ հայկական քաղաքակրթական ինքնանույնականացումը, հայկական քաղաքակրթական առանցքի վրա լարվածությունը և էթնիկ ինքնության չափանիշները դրական են կորելացված: Դրան հակառակ՝ եվրոպական քաղաքակրթական ինքնանույնականացումը և եվրոպական քաղաքակրթական առանցքի վրա լարվածությունը բացասական են կորելացված էթնիկ ինքնության չափանիշների հետ:

Գծապատկեր 7

Էթնիկ և քաղաքակրթական ինքնության գործոնների շաղկապվածությունը

Ա



Բ



ցախմբի միջոցով. «Յուրաքանչյուր ազգ կրում է իր բուն ազգայինը և այլ մշակույթներից ինչ-որ բան: Ձեր կարծիքով, այսօր Հայաստանի հայերի մեջ որքա՞ն է առկա [հայկական/ եվրոպական/ արևելյան/ խորհրդային/ ռուսական] մշակույթը: Գնահատեք, խնդրեմ, 0-ից 10 սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է բոլորովին առկա չէ, իսկ 10-ը՝ լիովին առկա է»: Իսկ «Քաղաքակրթական անհատական ինքնություն» պրոֆիլը կառուցվել է հետևյալ հարցախմբով. «Իսկ Դուք անձամբ այդ նույն մշակույթների հատկանիշներից որքա՞ն եք կրում: Յուրաքանչյուր մշակույթի չափը գնահատեք նույն՝ 0-ից 10 սանդղակով»:

[17] Նույն հոդվածում տվյալ քաղաքակրթական առանցքի վրա «Քաղաքակրթական լարվածությունը» սահմանվել է որպես այդ առանցքի վրա կոլեկտիվ և անհատական քաղաքակրթական ինքնությունների տարբերություն:

Եզրակացություններ

Մեթոդաբանական **եզրակացություններ**

1. Հայերի էթնիկ ինքնության դիտարկված վեց տարրերի համախմբությունը՝ ինքն իրեն հայ համարելը, հոր հայ լինելը, մոր հայ լինելը, հայերեն խոսել իմանալը, Հայ առաքելական եկեղեցուն պատկանելը և Հայաստանն իր միակ հայրենիքը համարելը, լավ է մոտարկում հայերի **էթնիկ ինքնության միջուկը**:

2. Հետազոտությունում կառուցված **էթնիկ ինքնության կենտրոնացվածության ինդեքսը** և **էթնիկ ինքնության կենտրոնացվածության հարաբերությունը** համարժեք են էթնիկ ինքնության միջուկի ամրությունը բնութագրելու և գնահատելու տեսակետից: Այդուհանդերձ, դրանք ունեն իրենց բաղադրիչները համալրելու կարիք:

Արդյունքների վրա հիմնված եզրակացություններ

1. Հայաստանի հայ հասարակությունում անձին հայ համարելու համար դիտարկված բոլոր չափանիշների շարքում առավել կարևորն է անձի՝ որպես հայ ինքնանույնականացումը. դրա պարտադիր լինելու պահանջը 83% է: «Լեզուն», «Կրոնը», «Հայրենիքը», «Հոր հայ լինելը» չափանիշների կարևորությունները 76%-ի մակարդակում են, «Մոր հայ լինելը» չափանիշի կարևորությունը 66% է:

2. Հայաստանի հայ հասարակության էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածությունը շատ բարձր է՝ CR_1-= 0.483, CR_4= 0.816:

3. Հայաստանում ժամանակի ընթացքում նվազում են էթնիկ ինքնության միջուկի բոլոր չափանիշների տարածվածությունները, բացի «ինքնանույնականացում» չափանիշից: Համապատասխանաբար նվազում է նաև էթնիկ ինքնության միջուկի ամրությունը: Մասնավորապես, եթե ամենաավագ տարիքային խմբում էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածությունը կազմել է CR_4 = 0.90, ապա 18-30 տարեկան երիտասարդների խմբում՝ CR_4 = 0.76: Ըստ կանխատեսման՝ ներկայիս 9-23 տարեկանների սերնդում ցուցանիշը կնվազի մինչև 0.72:

4. Հայաստանի հայերի շրջանում քաղաքակրթական և էթնիկ ինքնության շերտերը թույլ, սակայն վիճակագրորեն հավաստի շաղկապված են, մասնավորապես.

4.1. Երբ նվազում է հայկական անհատական քաղաքակրթական ինքնանույնականացումը, ապա մնացած հավասար պայմաններում նվազում է նաև էթնիկ նույնականացման միջուկի կենտրոնացվածությունը:

4.2. Եվրոպական քաղաքակրթական ինքնությունը և էթնիկ ինքնության միջուկի «ինքնանույնականացում» բաղադրիչը աճում կամ նվազում են միաժամանակ:

4.3. Երբ աճում է եվրոպական քաղաքակրթական ինքնանույնականացումը, ապա էթնիկ ինքնության միջուկի «ինքն իրեն հայ համարե-

լը» բաղադրիչը առանձնանում է մնացած հինգ բաղադրիչների խմբից և սկսում է ավելի ու ավելի վերածվել անկախ գործոնի:

5. Սփյուռքահայերի և Հայաստանից դուրս անժամկետ բնակվող հայերի՝ դեպի Հայաստան ներհոսքի դեպքում հայերի էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության նվազումը նպաստավոր է Հայաստանի հասարակությունում նրանց ինտեգրման տեսակետից:

6. Հայերի հայրենադարձության անհաջողության դեպքում հնարավոր է այլ էթնիկ և կրոնական խմբերի պատկանող անձանց ներհոսքը Հայաստան: Ռազմավարական հեռանկարում այդ խմբերի քանակական աճը հայերի էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածության նվազման պայմաններում կառաջացնի միջէթնիկ և միջկրոնական լարվածություններ և կոնֆլիկտներ:

7. Ազգային անվտանգության տեսանկյունից հայերի էթնիկ ինքնության միջուկի դինամիկայի հնարավոր բացասական և դրական ազդեցությունների **կոնկրետ գնահատականները ստանալու համար** անհրաժեշտ է հավելյալ խորացված ուսումնասիրություն:

8. Այդ հետազոտության արդյունքների հիման վրա անհրաժեշտ է մշակել Հայաստանում հայերի էթնիկ ինքնության պաշտպանության, պահպանման և զարգացման ռազմավարություն, որը պետք է պարունակի փոփոխվող աշխարհում հայերի էթնիկ ինքնության սպառնալիքների բնույթին համապատասխան մոտեցումներ և ռազմավարական դրույթներ:

Ստացված արդյունքներից ելնելով՝ առաջանում են մի քանի ուշագրավ հարցեր.

1. Արդյո՞ք ազդում է ինքնության միջուկի կենտրոնացվածությունը Հայաստանի հայ հասարակությունում հայերի էթնոմշակութային ենթախմբերի, մասնավորապես՝ սփյուռքահայերի, ադրբեջանահայերի, թուրքահայերի և արցախահայերի նկատմամբ ընկալվող սոցիալական տարածությունների վրա:

2. Արդյո՞ք էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածությունն ազդում է այլ էթնիկ և կրոնական խմբերի նկատմամբ ընկալվող սոցիալական տարածությունների վրա:

3. Ինչպե՞ս են միմյանց շաղկապված Հայաստանի հայերի էթնիկ ինքնության միջուկի կենտրոնացվածությունը, չափանիշները և ավանդական արժեքների նկատմամբ հասարակության դիրքորոշումները:

САМВЕЛ МАНУКЯН – ***Эмпирическое исследование критериев этнической идентичности армян Армении.*** – В статье на основе данных общереспубликанского репрезентативного социологического опроса, с использованием шести наиболее распространенных критериев идентификации этноса (самоидентификация, общий язык, общая территория, общая религия, этническая принадлежность отца и матери), сделана попытка найти в общественном сознании армян Армении ответ на вопрос: «кто является армянином?» Оценена распространен-

ность в общественном сознании каждого из критериев, на основе оценок критериев определены понятия «ядро этнической идентичности» и «концентрированность ядра этнической идентичности». Раскрыты направления и скорости изменения распространенности рассмотренных критериев, произведен прогноз распространенности среди поколения родившихся в 1998-2012 гг. Исследована структура взаимосвязей между рассмотренными критериями в общественном сознании армян Армении.

Ключевые слова: *Этническая идентичность, критерии этнической идентичности, ядро этнической идентичности, централизация этнической идентичности, структура этнической идентичности*

SAMVEL MANUKYAN – ***An Empirical Study of the Criteria for the Ethnic Identity of Armenians in Armenia.*** **–** In the article, based on the data of a nationwide sociological survey, with the use of the six most common criteria for identifying an ethnic group (self-identification, common language, common territory, common religion, ethnicity of father and mother), an attempt is made to find an answer to the question in the public consciousness of Armenians in Armenia – "who is an Armenian?" The prevalence of each criterion in the public consciousness was assessed on the basis of the criteria evaluations, the concepts of "core of ethnic identity" and "concentration of the core of ethnic identity" were defined. The directions and rates of change in the prevalence of the considered criteria are revealed, the prediction of the prevalence among the generation born between 1998 and 2012 is made. The structure of interrelationships between the considered criteria in the public consciousness of Armenians in Armenia has been investigated.

Key words: *ethnic identity, criteria for ethnic identity, core of ethnic identity, centralization of ethnic identity, structure of ethnic identity*

Abstract

In the article, based on the data of a nationwide representative sociological survey, using the six most common criteria for identifying an ethnic group (self-identification, common language, common territory, common religion, ethnicity of father and mother), an attempt is made to find an answer to the question in the public consciousness of Armenians in Armenia - “who is Armenian? " The prevalence of each of the criteria in the public consciousness was assessed, on the basis of the criteria evaluations, the concepts of “core of ethnic identity” and “concentration of the core of ethnic identity” were defined. The directions and rates of change in the prevalence of the considered criteria are revealed, the prediction of the prevalence among the generation born in 1998-2012 is made. The structure of interrelationships between the considered criteria in the public consciousness of Armenians in Armenia has been investigated.

Author

Samvel Manukyan - PhD (Sociology), Analyst, "Public Relations and Information Center" of Staff of the Prime Minister of the Republic of Armenia (SNCO) **,** Staff of the Prime Minister of the Republic of Armenia

E mail: samvelmanukyana@gmail.com

Keywords

Ethnic identity, criteria of ethnic identity, core of ethnic identity, centralization of ethnic identity, structure of ethnic identity

References

DeVellis, R. F. (1991) Scale Development: Theory and Applications. Applied Social Research Methods Series, Vol. 26.

Manukyan, S. A. (2019) Tsivilizatsionnaya identichnost' i yeye dinamika v Armyanskom obshchestve. "Vestnik Rossiysko-Armyanskogo Universiteta. Gumanitarnyye i obshchestvennyye nauki", 3-2019, 22-43.

Mukhlynkina, YU. V. (2011) Etnicheskaya identichnost': sushchnost', soderzhaniye i osnovnyye tendentsii razvitiya. Avtoreferat dissertatsii na soiskaniye uchenoy stepeni kandidata filosofskikh nauk. Spetsial'nost' 09.00.11. Sotsial'naya filosofiya. Moskva.

Ross, L., & Nisbett, R. (1999) Chelovek i situatsiya. Perspektivy sotsial'noy psikhologii. (B. C. Per. s angl. V. V. Rumynskogo pod red. Ye. N. Yemel'yanova, Per..) Moskva: Aspekt Press.

Rybakov, S. Ye. (2012) K voprosu ob etnicheskom fenomene. Monitoring obshchestvennogo mneniya, №2, (108).

Tishkov, V. A. (2010) Etnichnost'. Novaya filosofskaya entsiklopediya: V 4 tomakh. Moskva.

Toffler, E. (2002) Shok budushchego. Moskva: "Izdatel'stvo AST".